Արձանագրություն N 10

«ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-31» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 10 հունիսի 2021 թ. ժամը 12:00-ին

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի.

Նախագահ՝ Ա. Խառատյան

Անդամներ՝ Կ. Փալյան, Մ. Երիցյան

Քարտուղար՝ Վ. Մանուկյան

Բացակայում է.

Օրակարգ.

«ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-31» ծածկագրով գնման ընթացակարգի նիստի վարում, արդյունքների հաստատում

1. Նախագծող ընկերության կողմից ստացվել է պատասխան:
2. «ԿԱՍԱ կառուցապատում» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին: Համաձայն 04.05.2017 թ. ՀՀ Կառավարության N 526-Ն որոշման 41-րդ կետի, կազմակերպությանը առաջարկվել է մեկ աշխատանկային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները, սակայն «ԿԱՍԱ կառուցապատում» ՍՊԸ-ն չի ներկայացրել շտկված տարբերակ:
3. «Ջատեգշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը չի համապատասխանում ՀՀ «Գնումների մասին» օրենքի և ՀՀ Կառավարության N 526-Ն որոշման պահանջներին. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով և թվերով նշված գումարների հանրագումարը չի համապատասխանում տառերով և թվերով նշված ընդհանուր գնին:
4. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների վերաբերյալ /ՀՀ դրամ/.

   ընթացակարգի հրավերով սահմանված կարգին բավարարող մասնակիցների գնային առաջարկները ներկայացված են կցված հավելված N 1-ում:
5. Գնահատման արդյունքների մասին.

   Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման արդյունքները ներկայացվել են գնահատման թերթիկում:

Որոշում.

1. Հիմք ընդունելով 04.05.2017 թ. ՀՀ Կառավարության N 526-Ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետը և 42-րդ կետը, «ԿԱՍԱ կառուցապատում» ՍՊԸ-ի հայտը մերժել:

2. Հիմք ընդունելով 04.05.2017 թ. ՀՀ Կառավարության N 526-Ն որոշման 32-րդ կետի 2-րդ ենթակետը, «Ջատեգշին» ՍՊԸ-ի հայտը մերժել:
3. Ընտրված մասնակից ճանաչել «Լ. Ն. Մ.» ՍՊԸ-ին:
4. 12.06.2021 թ-ից մինչև 16.06.2021 թ-ը սահմանել անգործության ժամկետ, որից հետո պայմանագիր կնքելու առաջարկություն ներկայացնել «Լ. Ն. Մ.» ՍՊԸ-ին՝ 11,867,844 /տասնմեկ միլիոն ութ հարյուր վաթսունյոթ հազար ութ հարյուր քառասունչորս/ ՀՀ դրամ գումարի չափով, ներառյալ ԱԱՀ-ն:

Ընդունվել է որոշում՝
Կողմ՝ 3
Դեմ՝ 0

Ստորագրություններ.
Գնահատող հանձնաժողովի
Նախագահ՝ ______________________ Ա. Խառատյան

Անդամներ՝ ______________________ Մ. Երիցյան

______________________ Կ. Փալայան

Քարտուղար՝ ______________________ Վ. Մանուկյան

Հավելված N 1
N 10 արձանագրության

| .../h | Ապրանքի անվանումը | Չ/մ | Քանակ | Նախահաշվային | | «Հազարաշեն» ԱԿ | | «Մ. Բուատ» ՍՊԸ | | «Գրիսան» ՍՊԸ | | «Լ. Ն. Մ.» ՍՊԸ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Միավորի Գին | Գումար | առանց ԱՀՀ-ի | ԱՀՀ-ն ներառյալ | առանց ԱՀՀ-ի | ԱՀՀ-ն ներառյալ | առանց ԱՀՀ-ի | ԱՀՀ-ն ներառյալ | առանց ԱՀՀ-ի | ԱՀՀ-ն ներառյալ |
| 1 | ԱՆ «ՀՎԿ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-ի «Շիրակ» մասնաճյուղի «Գյումրի» մասնաշենքի սառնարանային պահեստի ձևափոխման, վերակառուցման աշխատանքներ | դրամ | 1 | 14,044,786 | 14,044,786 | 14,037,694 | 14,037,694 | 10,530,000 | 12,636,000 | 13,990,000 | 13,990,000 | 9,889,870 | 11,867,844 |